

ՕԳՈՍՏՈՍ 2021

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



Երևան 2021



1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում	7
1.3. Ջրահեռացման համակարգ	8
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	9
1.5. Էներգահամակարգ	9
1.6. Մեքենա-մեխանիզմներ	10
2. Առևտրային տնօրինություններ	11
2.1. Բաժանորդների տվյալներ	12
2.2. Հասույթ	12
2.3. Գանձում	13
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	14
2.5. Ջրաչափեր	15
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	16
3. Տեխնիկական տնօրինություն	17
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	18
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	19
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	21
3.4. Ջրատար համակարգի բարելավում	22
3.5. Գոտիավորման աշխատանքներ	23
3.6. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	28
3.7. 1-85 թեժ գիծ	29
4. Լրատվական ծառայություն	30
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	33
5.1. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ	34
5.2. Դասընթացներ/սեմինարներ	34
5.3. Բուժզննում	31
5.4. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	32



ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

Քաղաք Երևան

● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Սարի թաղ 22 փողոցում գտնվող $d=50$ մմ պողպատե քայքայված ջրագիծը փոխարինվել է $D=50$ մմ $L=100$ զծ/մ պոլիէթիլենային խողովակներով: Իրականացվել են անհատական միացումներ $d=25$ մմ խողովակներով $L=50$ զծ/մ ընդհանուր երկարությամբ: Թվով 6 բնակիչ-բաժանորդների ջրաչափերը տեղափոխվել են սահմանագատման կետ: Կատարված աշխատանքների արդյունքում բացառվել են ջրակորուստները, կարգավորվել է Սարի Թաղ 22 փողոցի ջրամատակարարումը:



Մարզ Արարատ



● «Մասիս» տեղամասի աշխատակիցների կողմից «Նորաբացի ՕԿՁ» տարածքում $d=529$ մմ $L=210$ զծ/մ երկաթե քայքայված ջրագիծը փոխարինվել է $d=426$ մմ $L=210$ զծմ պողպատե նոր ջրագծով:

● *Մարմարաշեն համայնքի* թիվ 20-36 փողոցները սնող $L=1250$ զծմ երկարությամբ հատվածում կատարվել է մետաղական ջրատարի փոխմիացման աշխատանքներ. հին $d=529$ մմ երկաթե $L=1250$ զծմ երկարությամբ ջրագիծը փոխարինվել է $d=400$ մմ պոլիէթիլենային $L=1250$ զծմ նոր ջրագծով: Իրականացված աշխատանքների արդյունքում կարգավորվել են ավելցուկային ճնշումները, երկարացվել են ժամային գրաֆիկները, գրանցվել է հասույթի աճ:




Քաղաք Երևան



● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Մոսկովյան փողոց 31 հասցեում $D=250$ մմ $L=30$ գծ/մ երկարությամբ շարքից դուրս եկած կերամիկական կոյուղագիծը փոխարինվել է $d=250$ մմ $L=30$ գծ/մ երկարությամբ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով, վերանորոգվել է թվով 1 դիտահոր:


Մարզ Տավուշ

● Ք. Դիլիջան, Օրջոնիկիձե փողոցում վերգետնյա տեղադրված $d=200$ մմ պողպատե կոռոզիայի ենթարկված կոյուղագծի $L=12$ գծ/մ հատվածը փոխարինվել է $d=150$ մմ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով: Վերանորոգվել է թվով 1 դիտահոր և տեղադրվել է $1,20 \times 1,20$ դիտահորի ծածկ: Կատարված աշխատանքների արդյունքում բարձրացել է սպասարկման որակը, վերացել են հաճախակի կրկնվող խցանումները:



Մարզ Գեղարքունիք

● Քաղաք Գավառ, Մայադյան փողոց 1-ին նրբանցքում գտնվող $D=150$ մմ $L=120$ գծ/մ երկարությամբ շարքից դուրս եկած մետաղական կոյուղագիծը փոխարինվել է $d=150$ մմ $L=120$ գծ/մ երկարությամբ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով:



Օգոստոս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	5698
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	30610
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	30180
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	15000
Ջրաչափական հանգույններ ուսուժնասիրություն, սխեմաների կազմում	հատ	27
Շահագործումից հանված ջրագիծ	մ	3481
Կառուցված ջրագիծ	մ	5096.3
Կառուցված կոյուղագիծ	մ	450.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	44
Փոխարինված փական	հատ	39
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	452
Մաքրված դիտահոր	հատ	979
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	115.1
Վերացված վթարներ		
Ջրամատակարարման ցանցում	հատ	1194
Ջրահեռացման ցանցում	հատ	2094
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	504

Օգոստոս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	1015	1161	548

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է օգոստոս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	183	3	0	2	0	0	1	0	0	189
Փոխարինված	162	24	8	6	3	3	0	0	0	206
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	304	100	2	4	2	3	1	0	0	416
Ընդամենը	649	127	10	12	5	6	2	0	0	811

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 811 ջրաչափ: Կատարված աշխատանքների 80 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Օգոստոս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև՝ Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1270	237	0
2	Մաշտոց	750	168	66
3	Շահումյան	790	157	4
4	Ջեյթուն	446	194	0
5	Շիրակ	1305	440	5
6	Արթիկ	0	78	12
7	Ապարան	0	25	0
8	Ալավերդի	1590	8	0
9	Աշոցք	200	3	0
10	Բերդ	0	10	0
11	Իջևան	990	35	18
12	Լոռի	2740	171	54
13	Նոյեմբերյան	75	15	0
14	Սպիտակ	0	18	0
15	Ստեփանավան	2265	29	5
16	Թալին	0	17	0
17	Տաշիր	290	10	0
18	Չարենցավան	335	75	1
19	Աբովյան	1530	50	0
20	Հրազդան	3250	106	40
21	Կենտրոն	510	238	30
22	Հյուսիս	170	208	18
23	Հարավ	0	323	0
24	Էրեբունի	0	156	0
25	Արմավիր	0	138	6
26	Արտաշատ	0	85	2
27	Էջմիածին	0	120	0
28	Աշտարակ	0	39	0
29	Արարատ	0	49	0
30	Մասիս	0	47	0
31	Գավառ	390	15	120
32	Սևան	190	97	15
33	Մարտունի	0	22	0
34	Վարդենիս	240	13	0
35	Ճամբարակ	0	17	0
36	Դիլիջան	120	38	22
37	Վայք	210	9	0
38	Եղեգնաձոր	210	17	1,5
39	Ջերմուկ	0	34	0
40	Սիսիան	455	70	3
41	Գորիս	0	46	2
42	Կապան	980	91	0
43	Մեղրի	180	28	0
	Ընդամենը	21481	3746	423

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. Սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել է հետևյալ աշխատանքները.

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանի տարածքում գտնվող կեղտաջրերի պոմպակայանում կատարվել է ընթացիկ սպասարկման աշխատանքներ, որի արդյունքում փոխարինվել է պոմպերի յուղերը, ստուգվել են պոմպերի և մալուխների հերմետիկությունը, մաքրվել են հակադարձ փականները:

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանում այրվել էր ջր մակարդակի ռելեն և շարքից դուրս էր եկել հակադարձ փականը, որոնք փոխարինվեցին նորով: Փոխարինվեց նաև կոյուղու պոմպի բանվորական անիվը, որը ամբողջովին մաշվել էր և որի արդյունքում ընկել էր պոմպի արտադրողականությունը: Վերոնշյալ կատարված աշխատանքներից հետո պոմպակայանը աշխատում է բնականոն ռեժիմով:

- Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանում այրվել էր պոմպի էլեկտրական թողարկիչը, որը փոխարինվեց նորով: Մաքրվեց նաև հակադարձ փականը, որը ամբողջությամբ խցանվել էր: Արդյունքում պոմպակայանը աշխատում է բնականոն ռեժիմով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	57,090	14.4
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	82,329	19.8
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	163,990	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	141,462	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	122,766	9.9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	18,735	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	13,295	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	9,900	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	13,300	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	5,166	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	74
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	38
Այցեր	1
Պոմպի տեղադրում	6
Պոմպի ապամոնտաժում	5

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Օգոստոս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար օգոստոս ամսվա ընթացքում նորոգվել է թվով 7 մեքենաների շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:



Թվով 5 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 10 մեքենա-մեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի գսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսաստոնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 19 անվադողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են:

Թվով 11 մեքենայի մարտկոց փոխարինվել է նորերով:

Փոխարինվել են թվով 87 մեքենա-մեխանիզմների

շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, անտիֆրիզ և քսայուղեր:

Թվով 3 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 7 մեքենա-մեխանիզմների համար նորոգվել է և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ: Վերանորոգվել են թվով 6 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուխ լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 2 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Նորոգվել է թվով 2 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:


Թվով 4 մեքենաների վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիոդային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 6 մեքենա-մեխանիզմների վրա:

Թվով 3 մեքենաների վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 9 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.09.2021 թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 556,443 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.



Տնօրինություն	Սպառողներ	2021թ. օգոստոս ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	654,852	531,684	81,2
	Իրավաբանական անձ	29,716	24,759	83,3

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	728,478	570,717	78,3
	Իրավաբանական անձ	35,004	25,553	73,0


Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել է տվյալների բազա է մուտքագրվել թվով 805 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ

Շարունակվում են ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցլության, առցանց հսկելու նպատակով: Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը: Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Օգոստոս ամսվա ընթացքում ստուգաչափվել է 2581 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 08.2021
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	1092	1102	231	2425
	Իրավաբանական անձ	51	84	21	156
	Ընդամենը	1143	1186	252	2581

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ օգոստոս ամսին փոխարինված 2581 ջրաչափերի մոտ 56%-ը (կամ 1438 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 232,802 մ3 հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2021թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր ցուցանիշ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Օգոստոս ամսին գանձումը կազմել է 2,209 մլն դրամ (93 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում մինչև 2020թ. Դեկտեմբեր ամիսը, կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝

փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսագանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը օգոստոս ամսին գերծ է մնացել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ SMS-հաղորդագրությունների): Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ: Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Օգոստոս ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 155 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 20,8 մլն դրամ ընդհանուր գումարով: Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2021թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10751	1498164433	7255	757550805	158	20991281	3338	719622347	4233	377138637


Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 67 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 2 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.09.2021թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում նոյեմբեր ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	8,621	2,348
Բնակիչ-բաժանորդներ	6,318	1,555
Իրավաբանական անձեր	2,303	793

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 278.6 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:



2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.09.2021թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	695,088	569,062	81.87	33,886	25,544	75.38
	Առանց ջրաչափի	33,390	1,655	4.96	1,118	9	0.81

Տվյալների բազայում 01.09.2021թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	867,089	388,742	44.83	37,785	10,483	27.74

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 3455 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1103 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2345	1920	81.7
գ.Պոռշյան	1584	1055	66.2
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5885	1837	32.1

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 9460, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 8627, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1302, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2047, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1259, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1782 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3794 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացուժների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրազրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացուժների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում: Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից: Հայտնաբերված և արձանագրված խախտումների քանակի նվազումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պայմանավորված է նաև երկրում տիրող, վերը նշված իրավիճակների հետ:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	335	375,523	59,163,468

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ




Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի օգոստոս ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը Երևանում կազմել է՝ 96.6%, ինչը 0.2% ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 58 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների ցանկը և դրանց գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2021թ-ի օգոստոս ամսին, 2020 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 84 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 689 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ.էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 24312 ԿՎտ/ժ. (5.12%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ, ինչը պայմանավորված է եղանակային շոգ պայսաններով:

Երևան քաղաքի բակային պոմպեր




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ուսումնասիրված հասցեներ

● Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է 112 հասցե: «ՀԷՅ» ՓԲ ընկերությունից ձեռք է բերվել թվով 1 տեխ. պայման: Պումպակայանների հոսանքի ծախսի գրաֆիկների ուսումնասիրության արդյունքում 3 պոմպակայաններում հայտնաբերված խնդիրները վերացվել են:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների էլ. էներգիայի ծախսն ավելացել է 713.74կՎտ/ժամ 3,3%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին



● Գյումրի քաղաքում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 4456 կՎտ/ժամ 14,2%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ




Կատարված աշխատանքներ

- Թվով 31 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 18 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:
- Թվով 368 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 248 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինվերտորների տեղադրում

- Հինգ հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փախարինվել են ինվերտորային համակարգով:
- Երկու հասցեներում նախկին մաշված պոմպերի և ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերի փոխարեն տեղադրվել են նոր ինվերտորային պոմպեր
- Տեղադրված ինվերտորային պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 8681,43կՎտ.ժ կամ 13,4%:




Խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի խափանումներ

- Հաշվետու ժամանակահատվածում 88 խոշոր պոմպակայաններում էլ.մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:


Օգոստոս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 758, 150 ԿՎտ/ժամ (28.90%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




- Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 239,095 ԿՎտ.ժ/ամիս կամ 9,07 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 1 132 402 ԿՎտ.ժ կամ 17,73 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են օգոստոս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Կառուցված ջրագիծ	մետր	1536
Շահագործումից հանված ջրագիծ	մետր	569.9
Կառուցված կոյուղագծեր	մետր	201
Շահագործումից հանված կոյուղագծեր	մետր	195
Տեղադրված փականներ	հատ	55
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	136
Օձուն գյուղի կոյուղագծերի թվայնացում	կմ	1675
Երևանի կոյուղու երկարությունը փոփոխված տարբերակով	կմ	1756,59
Աբովյան քաղաքի բաժանորդ կետերի թվայնացում Խտերակտիվ համակարգում	քաղաք	1
Լոռու մարզի գյուղերի թվայնացում ԱՏՀ-ում	գյուղ	4
Երևան քաղաքի համայնքների ջրագծերի թարմացումներ	քաղաք	1
Թվայնացում և տվյալների բազայի ստեղծում Արագածոտն մարզի գյուղերի վերաբերյալ	գյուղ	9
Համայնքների թեմատիկ շերտերի թվայնացում և տվյալների բազայի լրացում, տարածական տվյալների կոնվերտացիա AutoCAD համակարգից դեպի ArcGIS	գյուղ և քաղաք	34
Կենտրոն տեղամասի վթարների քարտեզագրում և տվյալների բազայում մուտքագրում ԱՏՀ-ում	վթար	155
ՀՀ ջրային ցանցի տվյալների բազայի միավորման համար տվյալների բազայի ձևաչափի մշակում	մշակում	1
ՕԿՋ ներքի, տեղադիրքերի և սխեմաների վերաբերյալ ԱՏՀ տվյալների բազայի ստեղծում՝ ըստ տրամադրված գույքի վարձակալման վկայականների	բազա	1
ԱՏՀ տվյալների փոխանակման և տվյալների բազայի կառավարման վերաբերյալ կանոնակարգերի և ընթացակարգերի մշակում	մշակում	1
Բազայում նոր ֆիզիկական կետերի ավելացում	կետեր	1685
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում Երևանում	բաժանորդ	10
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում Երևանում	բաժանորդ	2061
Մյասնիկյան և Բաղրամյան պոմպակայանների ակտիվների դաշտային գնահատման արդյունքների ներմուծում թվային միջավայր և լաբորատոր գնահատում	պոմպակայան	2
Բազայում նոր իրավաբանական կետերի ավելացում	կետեր	55
Արմավիր պ/կ-ի ակտիվների դաշտային գնահատման արդյունքների ներմուծում թվային միջավայր	պոմպակայան	1
Գյուղերի և քաղաքների նախնական հիդրավլիկական մոդելավորում	գյուղ	6
Գյուղերի և քաղաքների միավորում՝ ըստ տարբեր թվականների կատարողական գծագրերի և կատարվել է նախնական բազանների մշակում	գյուղեր և քաղաքներ	11
Վանաձոր և Գյումրի քաղաքների հիդրավլիկ մոդելների վերջնական խմբավորում	քաղաք	2

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

Արգական-Ջովունի ջրատար

Ջրատարի վրա $D=900$ մմ հատվածում հայտնաբերվել է վթար՝ $Q=4$ լ/վ: Այն վերացվել է տեղամասի կողմից:



Մաքրական-Աբովյան ջրատար

Ջրատարից սնվող Նուռնուս գյուղի ջրագծի վրա հայտնաբերվել է վթար՝ $Q=2$ լ/վ: Այն վերացվել է տեղամասի կողմից:



Արարատյան ջրատար

Ջրատարի վրա $D=1000$ մմ, հայտնաբերվել է վթար՝ $Q=3$ լ/վ:



Արզնի 2 ջրատար

Ջրատարի վրա $D=800$ մմ, հայտնաբերվել է վթար՝ $Q=7$ լ/վ, որը վերացվել է տեղամասի կողմից:

Արզնի 2 ջրատարի վրա՝ նույն հատվածում, 3 անգամ կազմակերպվել է կանգառ: Սողանքի հետևանքով ջրատարը տեղաշարժվել էր, որը դարձել է վթարի պատճառ.



$Q=100$ լ/վ- $D=1000$ մմ հատվածում՝ «Կորեայի ձորի» մոտակայքում



$Q=400$ լ/վ- նույն հատվածում:



$Q=150$ լ/վ- նույն հատվածում



Հավելում ենք, որ տեղադրվել է 1 հատ նոր ջրթող փական՝ $D=150$ մմ, ինչպես նաև փոխարինվել է մեկ վթարված ջրթող փական՝ $D=300$ մմ:

Վերացվել է նաև օդահեռ փականի կարճախողովակի վրա առկա վթարը:

Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են նաև ջրաչափման, ջրաքանակների կարգավորման աշխատանքներ:

3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գյուղ Երազգավորս

Ուսումնասիրություն կատարվել է Երազգավորս գյուղի մոտով անցնող, D=250մմ Ախուրյանի սահմանամերձ գյուղերը սնուցող ջրագիծը, որի վրա առկա էր վթար: Խողովակի որոնման և փորման աշխատանքների արդյունքում պարզ է դարձել, որ վթարվել է Երազգավորս գյուղը սնուցող երկրորդ ջրագիծը, որը ժամանակին գյուղի մեջ ընդհանուր ցանցից անջատված էր: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է D=300մմ, L=475մ պողպատե ջրագիծ: Տնտեսվել է մոտ 1-2 լ/վ ջրաքանակ




Քաղաք Գյումրի

Ուսումնասիրություն է կատարվել Գյումրի քաղաքի Պուշկին, Մուսայելյան փողոցներում, որտեղ ՎԶԵԲ ծրագրով իրականացվում է փողոցաշինական ծրագիր, նոր ասֆալտաշերտի տեղադրում: Տվյալ հատվածում առկա նոր ասֆալտաշերտի տակ տեղադրված D=100մմ պողպատե ջրագիծը, որը միացված էր նոր ՊԷ ցանցին, հանվել է շահագործումից հետագա վթարներից խուսափելու համար և միացվել է Մուսայելյան փողոցից: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է D=100մմ, L=350մ պողպատե ջրագիծ: Կառուցվել է D=50մմ ՊԷ L=20մ նոր ջրագիծ:



Ուսումնասիրություն է կատարվել Գյումրի քաղաքի Ղարսի խճուղում տեղի ունեցած թուջե խողովակի վթարը: Խողովակաորոնիչ սարքով, հոսքաչափով կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ այդ թուջե խողովակը սնուցվում է Վարդ-Բաղ կողջվող ջրատարից և ջուր է մատակարարում ռուսական գորամասին ու Սայր Հայաստան թաղամասի տնակները, որոնք սնուցվում են նոր ջրամատակարարման ցանցով: Արդյունքում դեպի գորամաս ջրագիծը պահպանվել է, իսկ դեպի թաղամաս գնացող ջրագիծը խցափակվել: Ջրագծի քայքայված լինելու պատճառով կառուցվել է նոր D=63մմ ՊԷ L=70մ ջրագիծ: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է D=150մմ L=390մ թուջե ջրագիծ: Կառուցվել է D=63մմ ՊԷ L=70մ նոր ջրագիծ: Վթարված թուջե ջրագիծը խցափակելով տնտեսվել է Q = 5 լ/վ ջրաքանակ:



Աշխատանքներ են կատարվել Գյումրի քաղաքի Տեր-Գաբրիելյան-Ղարիբջանյանի խճ. խաչմերուկներում: Քանի որ Տեր-Գաբրիելյան փողոցում ՎՋԵԲ ծրագրով իրականացվում են փողոցաշինական աշխատանքներ և փողոցով անցնող հին թուջե $D=300$ մմ ջրագիծը ապամոնտաժվել և անցկացվել է նոր $D=125$ մմ ՊԷ ջրագիծ: Անհրաժեշտ էր այն միացնել Սաքրման կայան թաղամասը սնուցող $D=200$ մմ պողպատե ջրագծին: Արդյունքում կառուցվել է $D=63$ մմ ՊԷ $L=43$ մ նոր ջրագիծ:



Լոռի տեղամաս

● Տարոն 4 Մեքենաշինարարների 47 շենքի մուտքագծի $D=32$ մմ $L=28$ մ պողպատե ջրագիծը, կառուցված լինելով դեռ ԽՍՀՄ տարիներին, փոխարինվել է նույն տրամագծի ՊԷ ջրագծով:

● Մուխուսի 1 շենքի մուտքագծի $D=32$ մմ $L=25$ մ պողպատե ջրագիծը, կառուցված լինելով դեռ ԽՍՀՄ տարիներին, փոխարինվել է նույն տրամագծի ՊԷ ջրագծով:



● Կուրթան գյուղ 5-րդ փողոցի $D = 75$ մմ $L = 40$ մ պողպատե ջրագիծը, կառուցված լինելով դեռ ԽՍՀՄ տարիներին, փոխարինվել է $D = 63$ ՊԷ ջրագծով:

Քաղաք Սպիտակ

● Մուխուսի 1 շենքի մուտքագծի $D=32$ մմ $L=25$ մ պողպատե ջրագիծը, կառուցված լինելով դեռ ԽՍՀՄ տարիներին, փոխարինվել է նույն տրամագծի ՊԷ ջրագծով:



Քաղաք Ստեփանավան

● Նար-Դոս փողոցի $D = 50$ մմ $L = 80$ մ պողպատե ջրագծերը, կառուցված լինելով դեռ ԽՍՀՄ տարիներին, փոխարինվել են նույն տրամագծի ՊԷ ջրագծերով:



Քաղաք Սևան

● Լ ճ ա շ ե ն - Ս ն ա ն ջրատարի վրա կատարված ուսումնասիրությունների ժամանակ դեպի Գագարինական գնացող 160մմ պ/Է ջրագծի վրա հայտնաբերվել է վթար, որը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 9$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Ալափարս

● Կոտայքի մարզի Ալափարս գյուղում կատարած աշխատանքների արդյունքում $=110$ մմ պ/Է ջրագծի վրա հայտնաբերվել և վերացվել է $Q=1$ լ/վ քանակությամբ վթար:



● Սևան քաղաքում Ի ր ա կ ա ն ա ց վ ա ծ վթարավորոնողական ա շ խ ա տ ա ն ք ն ե թ ի ընթացքում Սևան-Վարսեր ճանապարհի մոտ հայտնաբերվել է վթար:



● Վարսերգյուղում կատարած վ թ ա ր ա ո ր ո ն ո ղ ա կ ա ն ա շ խ ա տ ա ն ք ն ե թ ի արդյունքում $D=110$ մմ պ/Է խողովակի վրա հայտնաբերվել է վթար, որը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=7$ լ/վ ջրաքանակ:

Քաղաք Իջևան

● Հաճախակի տեղի ունեցող վթարներից խուսափելու համար փոխարինվել է Ս. Օհանյան 66 ա բն շենքի $D=59$ մմ պողպատե ջրագիծը՝ $D=50$ մմ Պ/Է ջրագծով $L=32$ մ: Արդյունքում տնտեսվել է $Q \approx 0.5$ լ/վ ջրաքանակ:



● Հաճախակի տեղի ունեցող վթարներից խուսափելու համար Նալբանդյան 30-րդ շենքի մոտեցող ջրագծի $D=25$ մմ պողպատե ջրագիծը փոխարինվել է $D=32$ մմ Պ/է ջրագծով, $L=56$ մ: Արդյունքում տնտեսվել է մոտ $Q=0.5$ լ/վ ջրաքանակ:



● Ս. Օհանյան փողոցում ասֆալտապատման աշխատանքների հետ կապված հետագա վթարներից խուսափելու համար $D=100$ մմ պողպատե խողովակը փոխարինվել է $D=110$ մմ պ/է խողովակով $L=40$ մ:



Քաղաք Երևան

● Շենգավիթ տեղամասում կատարված ուսումնասիրությունների արդյունքում Չեխով 10 և Շևչենկո 2 շենքերի բակում հայտնաբերվել է վթարված միացում $Q=1$ լ/վ ջրաքանակով, որին միացված էր նաև նշված շենքերի բակային այգու ռոռզման համակարգը: $D=50$ մմ ջրագիծը խցափակելուց հետո ընդհանուր տնտեսվել է մոտ $Q=2$ լ/վ ջրաքանակ:



● Էրեբունի տեղամասում կատարված վթարառորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Ազատամարտիկների 82 շենքի դիմաց: Փոխարինվել է $D=32$ մմ ջրագիծը նույն տրամագծի նոր ջրագծով: Արդյունքում տնտեսվել է $Q=2$ լ/վ ջրաքանակ:



● Էրեբունի տեղամասի «Նուբարաշեն 1-ին փողոց» գոտում կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Նուբարաշեն 1-ին փողոցին հարակից այգու ոռոգումը իրականացվում է խմելու ջրով: Ընդհանուր քանակով խցափակվել է 12 միացում: Արյունքում տնտեսվել է մոտ $Q=2$ լ/վ ջրաքանակ:



● Էրեբունի տեղամասում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար «Արին Բերդ» ՕԿՁ-ի մոտ գտնվող $D=800$ մմ պողպատե ջրատարի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=7$ լ/վ ջրաքանակ:



● Էրեբունի տեղամասում կատարված վթարաորոնողական աշխատանքի արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Գուրգեն Մահարի փողոցով անցնող $D=50$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=8$ լ/վ ջրաքանակ:



● Մաշտոց տեղամասում կատարած աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Մարգարյան 2-րդ նրբանցք 35 մանկապարտեզի մոտով անցնող $D=150$ մմ թուջե ջրագծի վրա, որը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=7$ լ/վ ջրաքանակ:



● Մաշտոց տեղամասի կատարած ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է վթար Լենինգրադյան 52շենքի Պ/Կ էլքի վրա: Այն վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 5$ լ/վ ջրաքանակ:



● Ծահումյան տեղամասի «Տիչինայի փողոց» գոտում կատարած աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Ռ. Մելիքյան փողոցով անցնող D=200մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q=15լ/վ ջրաքանակ:




● Ծահումյան տեղամասի «Տիչինայի փողոց» գոտում կատարած աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Մեքաստիա 123 փողոցով անցնող D=300մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q=16լ/վ ջրաքանակ: Նշված 2 վթարների վերացման արդյունքում «Տիչինա փողոց» գոտու ջրաքանակը նվազել է մոտ Q=25լ/վ-ով:



3.6 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և Խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.



● «Բերդ» ՋՄԿ սանիտարական գոտու պահպանության, ջրակորուստների նվազեցման, անսարք տեխնոլոգիական փականների փոխարինման և երկաթբետոնե կառուցվածքների պահպանման նպատակով ՊԿԱԾ-ով հատկացված ֆինանսական միջոցների հաշվին կապալառու կազմակերպության կողմից վերանորոգվել է «Բերդ» ՋՄԿ-ն սնուցող Չաթախ N1, Չաթախ N2 գետային ջրընդունիչները և երկու հաստ մարիչ հորեր:

● «Դիլիջան» ՋՄԿ քլորակայանի սենյակի կոսմետիկ վերանորոգման, դռների փոխարինման և քլորակայանից և ռեազենտ տնտեսությունից դեպի սեպտիկ հոր թողարկ ջրերի հեռացման նպատակով ՊԿԱԾ-ով հատկացված ֆինանսական միջոցների հաշվին կապալառու կազմակերպության կողմից «Գոլովինո» ՋՄԿ-ում վերանորոգվել է քլորակայանի սենյակը և փոխարինվել վթարային վիճակում գտնվող ջրահեռացման համակարգը:




● Քաղաք Դիլիջանում իրականացվել են «Առաջին շրջադարձ» գետային ջրընդունիչից «Գոլովինո» ՋՄԿ սնուցող ջրատարում առաջացած խցանման վերացման աշխատանքներ «Գոլովինո» ՋՄԿ-ին հնարավորինս առավել քանակի ջրով ապահովելու համար:



● Քաղաք Վանաձորի կառուցվածքում կուտակվող ջրաբերուկների հեռացման նպատակով վերանորոգվել է «Մպիտակ ջուր» գետային ջրընդունիչի չոր խցում առկա d=300մմ տրամագծի թողարկ փականը:

● Քաղաք Մասիսի Արարատյան 1/2 քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով Ալլոթս փականը փոխարինվել է նորով, և վերանորոգվել է 4 կգ/ժ վակուում կարգավորիչը:



● Քաղաք Գառնիի «Գառնի» քլորակայանում իրականացվել է հեղուկ քլորի համակարգի քլորագծերի ապամոնտաժում և մոնտաժում՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● Քաղաք Հրազդանի Մաքրավան 2 քլորակայանում Աբովյան քաղաք եկող ջրին քլորով ապահովելու նպատակով իրականացվել է ք. Աբովյան եկող քլորագծի վերանորոգում:



● Քաղաք Մասիսի Արարատյան 3/4 քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով իրականացվել է հեղուկ քլորի համակարգի ինժեկցիոն մղիչի փականի փոխարինում:



3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

● Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 41938 զանգ, որից առևտրային բնույթի զանգերը՝ 11739: Երևան քաղաքի համար եղել է 9288 զանգ:

● Օգոստոս ամսվա Երևանի ցուցանիշը կազմել է 79,1 %, իսկ մարզերի ցուցանիշը՝ 2451 զանգ (20.9%): Շահագործման վերաբերյալ ստացվել է 30199 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 20980 զանգ (69.5%), իսկ մարզերինը՝ 9219 զանգ (30,5%):

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիր

		Ստորաբաժանում	
Առևտրային	Ընդամենը		11739
	ԵՐԵՎԱՆ		9288
	ՄԱՐԶԵՐ		2451
Շահագործում	ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ		30199
	ԱՐԵՎԵԼՔ		11505
	Շենգավիթ		1671
	Կենտրոն		2344
	Հյուսիս(Ավան,Նոր Նորք)		1934
	Էրեբունի		1524
	Պոմպ		531
	Մարզեր		3501
	այդ թվում Կոյուղու վթար		59
	այդ թվում Դիտահորի խցանում		2335
	ԱՐԵՎՄՈՒՏՔ		18694
	Արաբկիր		4691
	Քանաքեռ-Զեյթուն		3198
	Մաշտոց		1941
	Շահումյան		1914
	Պոմպ		1232
	Մարզեր		5718
այդ թվում Կոյուղու վթար		91	
այդ թվում Դիտահորի խցանում		3198	
		Ընդամենը	43705

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Օգոստոսին իր պիկին հասավ Հանրային կապերի բաժնի /ՀԿԲ/ կողմից Երևանում և մարզերում ՊԿԱԾ-ով կապալառու շինարարական կազմակերպությունների կողմից, ինչպես նաև շահագործման տեղամասերի ուժերով իրականացվող ծրագրերի լուսաբանումը:

ՀԿԲ-ն նախորդ ամիսների օրինակով, սակայն էլ ավելի ակտիվ, շարունակաբար հանրությանն է ներկայացրել համակարգում տարվող աշխատանքները: Մասնավորապես, խոսքը Երևանի Քեռու, Ջամբուլի փողոցներում, Նոր Նորքի 6-րդ զանգվածում, Էջմիածնին հարակից Շահումյան գյուղում, Գավառ քաղաքի Բունիաթյան և Կաբեյլագործների փողոցում, Կոտայքի մարզի Ջորավան և Բալախովիտում գյուղերում, Դիլիջանի ու Գորիսի շարք հատվածներում իրականացվող ծրագրերի մասին է: Ընդհանուր առմամբ օգոստոսին ապահովվել է մոտ 20 անուն աշխատանք, որի մասին ՋԼՄ-ներով տեղեկացվել է սպառողներին: Ամենաարդյունավետն այստեղ, անշուշտ, հանդիսացել է Հանրային հեռուստատեսության անդրադարձը Արմավիրի մարզի Այգեկ գյուղում տարիների պատմություն ունեցող ջրի խնորի լուծմանը:

Հանրային հեռուստատեսության Արգի 2 - Երևան ջրատարի վթարի մասին



Շրջապահ տարրում Վեդյան Արմավիրի մարզում իրականացնում է 5 քառակուսի մետր շառավիղի ավելի քան 220 մմ դրամ արժեքով Պաշտպան այն աշխատանքները, որոնք կատարվում են բնակչության շահագործման տեղամասերի ուժերով: Դրանցից մեկը Այգեկ գյուղում է, որտեղ հաջորդաբար լուծվում է տարիների պատմություն ունեցող խնոր, ջրի խնորից: Այդ մասին է Հանրային հեռուստատեսության ռեպորտաժը:



Լուրեր
Օգոստոսի 7 -
Այգեկն ապահովված է խեղու ջրով: «Վեդյա Ջուրը» փորել է գործը մտցրել վթարված խորովակաշարը
Դեղինակ՝ Դավիդ Ասլանյան #Լուրեր

Դրան զուգահեռ, զգալի ուշադրություն է դարձվել նաև ընթացիկ գործունեությանը, սպառողների բողոքներին արձագանքելու արդյունքում ձեռնարկվող միջոցներին, այդ թվում ջրագծերի վթարների և կոյուղագծերի խցանումների վերացմանը, ջրի ճնշման կարգավորմանը, ժամանակակից բակային պոմպերի տեղադրմանը: Օրինակ լուսաբանվել է ջրամատակարարմանն ու ջրահեռացմանը վերաբերող հրատապ խնդիրների լուծումը Սպիտակի Թորոպյան փողոցում, Երևանի Սեբաստիա 123 շենքում, Մարյան 24 շենքում, Փարաքարի Նարեկացի թաղամասում:



Սակայն ամսվա մեխն այնուամենայնիվ հանդիսացավ «Արգի 1 – Երևան» մայրուղային ջրատարի իրար հետևած 3 վթարները 10 օրվա ընթացքում, որը զգալիորեն խաթարեց Արաբկիր վարչական շրջանի ջրամատակարարումը: Հաշվի առնելով սպառողների հետաքրքրությունը խնորի նկատմամբ, ՀԿԲ-ն միջոցներ ձեռնարկեց և կարողացավ խնորի օբյեկտիվ ներկայացման համար երկրորդ անգամ օգոստոսին ներգրավել Հանրային հեռուստատեսություն, ինչը զգալիորեն օգնեց մեղմել ջրի անբավարարությամբ առաջացած բաժանորդների

դժգոհությունը:

Նշված աշխատանքների լուսաբանման ընթացքում նաև հետևողականորեն փորձ է արվել սպառողներին հաղորդել տեղեկություններ համակարգի տարբեր ծառայությունների, ինժեներական կառույցների, դրանց աշխատանքի և սպասարկման առանձնահատկությունների, ինչպես և զարգացմանն ուղղված Վեդյայի տնօրինության ջանքերի մասին: Դրա օրինակ են հրապարակումները ջրադրույրներում գործող 53 խոշոր պոմպակայանների մասին, որոնց միջոցով բաշխիչ ցանց է մղվում արտադրվող ջրի շուրջ 22%-ը, քլորակայանների, էներգասնուցման համակարգի տեխնիկական վիճակի, արագ վերանորոգման և անխափան գործունեության ապահովման կարևորության մասին:

Այս մոտեցման ուղերձը հետևյալն է. սպառող պետք է ոչ թե պարզունակ պահանջատեր լինի, բարձրաձայնի միայն իր իրավասությունները ու չզգա որևէ անձնական պատասխանատվություն կայուն ջրամատակարարման ապահովման համար, այլ հասկանա, որ հանդիսանում է կոմունալ ոլորտի շղթայի օղակներից մեկը և պետք է ունենա իր ներդրումը հաջողության մեջ՝ ի դեմս ժամանակին կատարվող վճարումների, ապօրինությունների բացառման և ջրի օգտագործման պատշաճ մշակույթի ապահովման: Իսկ սա օգոստոսին, Վեդյաթիմի ծառայություններից ստացված տեղեկատվության համաձայն, դեռևս հանդիսանում է հրատապ խնդիր: Այսպես, Շենգավիթ, Նուբուբարաշեն և Ավան վարչական շրջաններում գրանցվել են խմելու ջուրը ոռոգման նպատակով օգտագործելու բազմաթիվ փաստեր, որոնք հրապարակվել են: Վեդյայի ակտիվ և բազմաբնույթ գործունեությունը հաշվետու ամսին ՀԿԲ-ին թույլ է տվել հնարավորինս լայն և բազմաբովանդակ ներկայացնել հանրությանը Վեդյա Թիմին և փորձել գործի ծավալներին համահունչ

«Վեդյա ջուր» ընկերության Գումարայանների հայտնաբերում և գործարարական վարչության մասնագետները՝ ժամանակակից հուպեզայի, խորովակայնարի, ակվաբոն և կորեյատոր արքերի օգնությամբ հանրապետությունում մեկ փնտրում և գտնում են ջրագծերի «թափված վթարները», երբ ջուրը հոսում է ընդերը և տարիներ շարունակ անկաստ մնում:

Շրջապահ տարրն առաջին կիսամյակում Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արարատի, Տավուշի մարզերում և Երևանում 436 նման վթարներ են հայտնաբերվել, որոնք վերացվել են վարչության մասնագետների և շահագործման տեղամասերի վթարային բրիգադների կողմից:


Արդյունքում վերականգնվել է վայրկյանում 1150 լիտր ջրաքանակ:

#ՎեդյաԳալստյան #ՎեդյաՋուր #Վեդյաթիմ



կերպով սպառողների շրջանում բարձրացնել ընկերության գործարար համբավը: Տնօրինության կողմից Վանաձորում տեղացած հորդ անձրևների հետևանքների վերացման գործում քաղաքին ցուցաբերած օգնության, ինչպես նաև «Աշտարակ» և «Գավառ» շահագործման տեղամասերի մի խումբ մասնագետների դրամական պարզևի արժանացնելու փաստը ևս օգտագործվել է ՎեոլիաԹիմը ներկայացնելու, աշխատանքի կարևորությունն ու դժվարություններն ընդգծելու նպատակով:

Այս բոլոր հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, facebook.com/veolia.armenia-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. Veolia.am պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և youtube Veolia Jur էջերում:

Վեոլիա Տուր  Իրլանդ

Նոր համագործակցության արդյունքում այժմ ընկերությունը է սպառող չորի համար վճարումը կատարել Վեոլիա Տուր ընկերության պաշտոնական կայքում Իրլանդ առցանց վճարային համակարգի միջոցով:

Վճարման քայլերի հերթականությունը մանրամասն ներկայացված է կայքի «Առցանց ծառայություններ» բաժնում:
<https://bit.ly/3fluv51...> **Տեսնել ավելին**



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



5.1. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

● Ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանումներից ՈԱԱ բաժնին ներկայացվել են կառուցվածքային ստորաբաժանումների անձնակազմերի ջերմաչափման և գրասենյակների ախտանման աշխատանքների վերաբերյալ տվյալները:

● Շարունակվել են Ընկերության ստորաբաժանումներին տրամադրվել համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներ:

5.2. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱԼՆԵՐ

● Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ, 247-րդ և 254-րդ հոդվածների, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Վտանգավոր քիմիական նյութերի տեղափոխում, պահեստավորում և գործածում» ԲՌԿ ստանդարտի պահանջներով և հիմք ընդունելով Ընկերության «Անձնակազմի աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության, մասնագիտական և աղմինիստրատիվ հմտությունների բարելավման մասով ուսուցման, վերապատրաստման և (կամ) որակավորման դասընթաց կազմակերպելու, անցկացնելու, որակավորման վկայականներ տրամադրելու մասին կարգի» պահանջները, բաժնի կողմից Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 50 աշխատողի համար կազմակերպվեց և իրականացվեց

▶ «Քլորավորող օպերատորի մասնագիտական որակավորման» և «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» առկա դասընթաց և գիտելիքների ստուգում՝

▶ «Վտանգավոր քիմիական նյութերի հետ աշխատանքին ներկայացվող ԲՌԿ ստանդարտի պահանջներ» առկա դասընթացը:



● Բաժնի Ընկերության Առևտրային տնօրինության և ՄՌԿ բաժնի թվով 29 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց «Սթրեսի կառավարում» և «Բաժանորդների որակի սպասարկման չափորոշիչները» թեմաներով դասընթացները:




● Բաժնի ուսուցման և վերապատրաստման մասնագետը մասնակցեց Ֆրանսիական «Մեդիթերեյնինգ» միջազգային ընկերության կողմից կազմակերպված «Առաջին բուժօգնությունը արտակարգ իրավիճակների պայմաններում» եռօրյա դասընթացին, որին դասընթացի ավարտին շնորհվեց համապատասխան սերտիֆիկատ:



Պետք է նշել, որ վերոնշյալ առկա դասընթացները կազմակերպվեցին COVID-19 համավարակի տարածման դեմ ուղղված սանիտարական կանոնների պահանջներին համապատասխան. դասընթացների մեկնարկից առաջ կատարվեց մասնակիցների հեռավար ջերմաչափում, գրանցում և COVID-19 տարածման կանխարգելման վերաբերյալ սանիտարական կանոնների իրազեկում: Դասընթացների ողջ ընթացքում մասնակիցների միջև պահպանվեց 1,5 մ սոցիալական հեռավորություն, մասնակիցները և դասընթացավարը կրեցին դիմակներ:

2020-2021 թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



5.3. ԲՈՒԺՁՆՆՈՒՄ

● ՈԱԱ բաժինը, առաջնորդվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 27 մարտի 2003 թվականի N 347-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, 2021 թվականի հունիս-օգոստոս ընկած ժամանակահատվածում «Մեդլայն» բժշկական կենտրոնի կողմից պայմանագրային հիմունքներով կազմակերպեց խմելու ջրի մաքրման, վարակազերծման և ջրամատակարարման ցանցի սպասարկման աշխատանքներում անմիջականորեն ներգրավված Ընկերության համապատասխան մասնագիտությունների շուրջ 633 աշխատողի առողջական վիճակի դինամիկ հսկողության, վարակիչ և մակաբուժային հիվանդությունների տարածման կանխարգելման և հիվանդությունների հայտնաբերման նպատակով տարեկան պարտադիր թերապևտիկ զննություններ և լաբորատոր հետազոտություններ և անձնական սանիտարական (բժշկական) գրքույկների վարման գործընթացները:

5.4. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ


● Բաժինը անվտանգության պատասխանատուներ նախօրոք մշակված պլան-ժամանակացույցերի համաձայն իրականացրեցին անվտանգության ստուգայց Ընկերության թվով 1 քրորակայանում: Ստուգայցի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Ծառայության կողմից ուսուսմասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:

● Սույն թվականի օգոստոսի 10-ից 11-ը աշխատանքային այցի շրջանակներում Հայաստան ժամանած Վեոլիա Գրուպի Անվտանգության Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Գոտո ֆինանսական տնօրեն պարոն Լուիս Հանանիային և Մարդկային ռեսուրսների կառավարման տնօրեն տիկին Ագաթա Մազուրեկ-Բեկը Ընկերության Գլխավոր տնօրեն Մ.Շահինյանի և Գլխավոր տնօրենի տեղակալ, Գործառնական տնօրեն Վ.Բատոյանի գլխավորությամբ կատարեցին անվտանգության ստուգայցեր ՊԿԱԾ-ի շրջանակներում կատարվող ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքների շինհրապարակներ, որտեղ ծանոթացան տեղում կատարվող աշխատանքների ծավալներին, ուսուսմասիրեցին կապալառուների կողմից տեղում կիրառվող անվտանգության կանոնների պահպանմանը: Ստուգայցին մասնակցեց նաև ՈԱԱ Բաժնի ղեկավարը, ով անցկացրեց անվտանգության հրահանգավորում ներկաների համար և պատասխանեց պատվիրակության հարցերին կապված ՀՀ-ում գործող շինհրապարակների կազմակերպմանը ներկայացվող անվտանգության պահանջների հետ:



2021 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների





«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադունցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am